

---

## «ՇԱՆՔ» ՀԱՆԴԵՍԸ 1911-1915 ԹԹ.

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ. Վ.

«Շանթ» հանդեսը լույս է տեսել Կ.Պոլսում 1911-1915 թթ. և 1918-1919 թթ.: Խմբագիրը Մերուժան Պարսամյանն էր: Աշխատակազմում ընդգրկված էին ժամանակի անվանի գրողներն ու հրապարակախոսները. Երվանդ Օտյան, Երուխան (Երվանդ Սրմաքեշխանյան), Օննիկ Չիֆթե Սարաֆ, Եղիա Տեմիրճիպաշյան, Զարուհի Գալեմքյարյան, Միքայել Շամտանճյան, Մկրտիչ Պարսամյան (Կայծակ), Ժակ Սայապալյան (Փայլակ), Արամ Զարգ (Վտարանդի), Հակոբ Անտոնյան, Շավարշ Միսաքյան, Հակոբ Ճուլյան (Միրունի), Ենովք Արմեն, Արշակ Ալպոյաճյան, Գևորգ Մեսրոպ, Հովհաննես Ասպետ և այլք: «Շանթը» թղթակիցներ է ունեցել Արևմտյան Եվրոպայի երկրներում, Կովկասում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում: Նրանց նյութերը՝ հանդեսին հաղորդում էին «տեղի գրական և գեղարվեստական շարժումը՝ մասնավորապես հայեն բոլորի և հայությունը շահագրգռող»<sup>1</sup>: «Շանթը» հիմնվել էր հայ գրականության զարգացմանը նպաստելու նպատակով: «Հանգրվանը» խմբագրականում նշված է, որ հանդեսը «ժամադրավայրը պիտի ըլլա բոլոր ինքնզինքնին հարգող գրագետներուն. հոն կուսակցական ոգին տեղի պիտի տա զուտ գեղարվեստական մակընթացության, ամեն գրագետ՝ այդ նոր գետնին վրա ձեռք պիտի երկարե իր սկզբունքի ախոյանին՝ գործակցելու համար գրականության պանծացումին»: Այդ ծրագրային խմբագրականում նշվում էր ամսագրի հիմնական նպատակը՝ «Շանթի» էջերում պիտի արտացոլվեն հայ արվեստն ու գրական միտքը, իսկ «գրական և գեղարվեստական շարժումին մեջ պիտի խոսվի ամեն հրատարակություններու վրա ընդհանրապես՝ տարվան գրականության և գեղարվեստին ամփոփ ու ճշգրիտ պատմությունը տված ըլլալու համար» (նույն տեղում):

Հրատարակության առաջին շրջանում «Շանթն» ունեցել է գրականգեղարվեստական և գիտական ուղղվածություն: Հանդեսի հիմնական բաժիններն ու խորագրերն էին՝ «Գրական-գեղարվեստական շարժում և մոտեցումներ», «Գրքեր», «Թրքահայ գրականություն», «Մամուլ», «Թարգմանություններ», «Հայ աշխարհ», «Հայ հորիզոններ», «Նամակներ», «Լրափունջ»:

Կային թեմաներ, որոնց անդրադառնում էին «Շանթի» գրեթե յուրաքանչյուր համարում: Օրինակ՝ «Թրքահայ գրական շարժումը» խորագրի ներքո մշտապես քննարկվում էին արևմտահայ գրականության անցած ուղին, թերություններն ու ձեռքբերումները: Հոդվածներում մոտեցումները հաճախ տարբերվում էին, իսկ երբեմն էլ ծայրահեղորեն հակադիր էին միմյանց: Ենովք Արմենը «Թրքահայ գրական շարժումը» և «Կարճատեսությունը քննադատության մեջ» հոդվածներում գրում է, որ

արևմտահայ գրականությունը նեխում է լճացման և «անհույզ անշարժությանը մեջ» և

---

<sup>1</sup> Շանթ, 1911, N 1, էջ 1: Այսուհետև հանդեսից արվող մեջբերումների տվյալները կնշվեն բնագրին կից:

նույնիսկ 1909-1911 թթ. «բռնված է փտումի ու այլասերումի հյուծախտեն» (1911, N 2, էջ 17-19, 1911, N 4, էջ 63): Պատճառը հասարակության անտարբեր վերաբերմունքն է գիր ու գրականության նկատմամբ. «Հասարակությունն է որ կը վրիպի մտավորական աշխարհով ապրելու մարդկային վայելքեն: Այդ հասարակությունը կրնա տնտեսական աշխարհի բարձունքներու վրա գտնվիլ, բայց մտավորապես կործանված է: Չի կա՛ գրական սնունդի պետքը, որպեսզի ըլլա՛ նաև մատուցումը: Հույս չի կա՛ գրականության ծաղկումին, որովհետև անոր կյանք տալու կոչված արևը՝ հասարակությունը, անդարմանելի կերպով այլասերած է» (1911, N 2, էջ 18): Այս պայմաններում անգամ տաղանդավոր գրողները պիտի խամրեն՝ իրենց ճակատները «ջախջախելով հասարակության... անտարբերության բիրտ պատնեշներուն դեմ» (նույն տեղում): Ե. Արմենին համամիտ է Ատրուշանը (Ռ. Սամիկյան), որն ավելի խիստ է բնորոշում իրավիճակը՝ գրելով, թե գրականություն չունենք, իսկ ժամանակակից գրողները «ընդօրինակողներ են, ոչ թե հղացողներ» (1911, N 2, էջ 19): Սուրեն Պարթևյանը արևմտահայ մտավորականությանն անվանում է «վրիպած սերունդ», որը «դեռ չի կրնար ինքզինքը գտնել ու համասեռ, ներդաշնակ ու տևական գործունեությամբ մը իր կենդանությունն ապացուցանել» (1911, N 10, էջ 149-151): Հակոբ Քյուֆեճյանն ասվածին ավելացնում է, թե ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ ժամանակակից գրականության թերությունը հռետորությունն է, ինչը «անիմաստ ու թերևս վնասակար հպարտության մը կրկին հանգամանքներովը բավական ուշագրավ երևույթ մըն է, արժանի լուրջ ուսումնասիրության» (1912, N 26, էջ 18):

Արևմտահայ գրականության մասին վերը նշված անտեղի գնահատականները մերժում, չեն ընդունում և «Շանթ» հանդեսում իրենց մոտեցումներն են արտահայտում մի շարք մտավորականներ, գրողներ ու հրապարակախոսներ: Ե. Սրմաքեշխանյանը «Հռետորությունը քննադատության մեջ» խմբագրականում փաստերով ապացուցում է, որ «հայկական ոսկեդարեն (Ե դար) ասդին, ազգային մատենագրությունը ոչ մեկ ատեն հասավ այն ծաղկման որպիսին վերջին քսան տարվան մեջ: Ես չեմ ճանչնար ազգային ավելի կենդանի, հզոր, առողջ, գունագեղ, արվեստագիտական գրականություն մը ինչպես ան որ հայտնվեցավ ութսունական թվականներեն ասդին Թուրքիա, թե արտասահման» (1911, N 3, էջ 33-34): Երուխանը գրականությունը համարում է անթափանց գրահ, որին բախվելով՝ բթացել են մեր թշնամիների սրերը, իսկ համիդյան ջարդերից հետո «ճղակտոր ելլող հայութենեն նոր և տարօրինապես հզոր գրականություն մը կը հառներ»: Իր վերլուծությունը Երուխանն ավարտում է այն եզրակացությամբ, թե հռետես են ու սխալվում են այն գրաքննադատները, ովքեր «կ'ողբերգեն հայ գրականության անկումին վրա՝ օսմանյան սահմանադրութենեն առաջ թե ետքը» (նույն տեղում): Մերուժան Պարսամյանը «Դժգոհները՝ գրականության մեջ» խմբագրականում համոզված է, թե «մեր դժգոհները ո՛ր գրական դպրոցին ալ որ պատկանին, չպիտի դադրին երբե՛ք միջակ ու արգահատելի ըլլալե, իրենց անհանդուրժելի իմաստակությունով և փքացած այլամերժությունով» (1911, N 7, էջ 97-98): Այդպիսիներին Պարսամյանը հիշեցնում է, որ

աշխարհում անթերի ոչինչ չկա, և միշտ պետք է «ավելիին բաղձալ՝ առանց արհամարհելու անցյալ ու ներկա տաղանդներու գործը» (նույն տեղում):

Այս կարգի բանավիճային հոդվածների շնորհիվ «Շանթը» կարողացել է վերոհիշյալ խնդիրներով մտահոգ մարդկանց համար ստեղծել արտահայտվելու հնարավորություն և դրանով նպաստել գրականության զարգացմանը: Գնահատելի է, որ տարբեր կարծիքների տեր անձինք հանդեսի էջերում պահպանել են բարեկրթությունը և հազվադեպ են մտել անձնական վեճ ու կռիվների մեջ: «Շանթի» ընթերցողներին հենց սա է գրավել: Նրանցից մեկը՝ պարսկահայ բանաստեղծ Տ. Աճեմյանը, «Նամակներ» բաժնում մաղթում է, որ հանդեսում «երևցող հայ գրական վարպետները շարունակեն մնալ կողք կողքի՝ հետզհետե ավելցնելով իրենց շարքի մեջ ուրիշներ, բոլորովին հեռու կուսակցական արդեն իր համն ու հոտը կորսնցնող վեճերե և գործածեն իրենց սուր գրիչները ոչ թե իրարու միսը ծակծկելու, այլ մշակելու և գեղեցկացնելու հայ գեղարվեստի... անդաստանը» (1911, N 6, էջ 95): «Շանթի» «Գրականգեղարվեստական շարժում» բաժինն իրապես ծառայել է այդ նպատակին: Հատկապես արժեքավոր են բաժնի «Գրքեր» և «Մամուլ» խորագրերը, որոնցում ներկայացվում, գրախոսվում կամ վերլուծվում էին ժամանակի մամուլի օրգանները և նոր հրատարակված գրքերը: Այստեղ նույնպես ապահովվում էր բազմակարծություն: Նույնիսկ նույն էջում կամ հաջորդական համարներում տպագրում էին կողմ և դեմ տեսակետներ որևէ գրքի կամ թերթում տպագրված գրական կարևոր հարցեր շոշափող հոդվածների մասին: «Շանթի» գրախոսականները աչքի են ընկնում անկեղծությամբ և անաչառությամբ: Դրանցում մատնանշվում էին տվյալ գրական երկի և՛ արժանիքները, և՛ թերությունները: Կարող ենք ասել, որ «Շանթի» քննադատությունը սրտացավ և բարեկամական է իրական գրական արժեքների և, ընդհակառակը, խարազանող ու ոչնչացնող՝ նորելուկ անտաղանդների հրատարակած գրքերի նկատմամբ: Մերուժան Պարսամյանը փաստում է. «Այս միջոցիս սկսնակները գործի վրա են. անոնք ավելի գործունեություն ցույց կուտան, քան հիները» (1911, N 1, էջ 14): Նա պարբերաբար անդրադառնում է «անխոստմնալից, շատախոս սկսնակներու կարավանեն» հայտնված բանաստեղծների ստեղծագործություններին: Օրինակ՝ ըստ Պարսամյանի՝ Ղ. Գունտուրաճյանի «Բոցեր ու խոցեր» գրքում արտահայտված գաղափարները տափակ ու սովորական են. «Իր սերը փոթորիկ չի ճանչնար. ո՛չ պայքար կա հոն, ո՛չ մեղանչում, ո՛չ ըմբոստացում կա, ոչ արհամարհանք» (նույն տեղում): «Շանթի» լոնդոնյան թղթակից Խոսրով Գարապաճագյանի «Մտքիս խառնարանեն» գրքույկը Մ. Պարսամյանը բնորոշում է որպես «արձակ և ոտանավոր գրվածքներու միջակորեն անհաջող հավաքածո մը, անկապակից, անտեղի, տղայական, դպրոցականի շարադրություններ, որոնց մեջ դատողությունը, իմաստությունը իր գոյությունը չէ պտըտցուցած... Չեմ կրնար ըմբռնել որ ի՛նչպես մարդ գիրք կը հրատարակե, ինքզինքնին բացարձակապես ծաղրելի դարձնելով» (նույն տեղում): Մերուժան Պարսամյանը կարծում է, որ Լևոն Էսաճանյանի բանաստեղծությունների «Փանդիո» ժողովածուն գրված է բառախաղերով և բաղկացած է միմյանց հետ կապ չունեցող կտորներից: Գրքի հեղինակն էլ ոչ թե բանաստեղծ է, այլ՝

«վատառողջ խառնվածքով և անհավասարակշիռ միտքով» աշուղ (1911, N 2, էջ 29): Պարսամյանը քննադատական նույն վերաբերմունքին է արժանացնում Հովհան Հայկազնի

(Հ. Մոսկոֆյան) «Վերածնունդի երգեր» ժողովածուն: «Ու կ'երկարի շարքը նորափետուր վառյակներուն: Կ'արտադրեն, շարունակ կ'արտադրեն. չեն հոգնիր, իրենց ռամիկ, տափակ ներշնչումները ա'յնքան արգահատելի են, որքան զայրույթ գրգռող... Գրականության անունով կատարված այս տխուր ապօրինությունները պետք է վերջ գտնեն բացարձակապես», - գրում է Մերուժան Պարսամյանը (նույն տեղում): «Շանթի» խմբագրի հետ համաձայն է գրաքննադատ Արտաշես Հարությունյանը: Այդ մասին նա գրել է Ենովք Արմենի՝ «Հայ նոր բանաստեղծները. Հրանտ Նազարյանց» գրքի առիթով: Նա վստահ է, որ թեև Հրանտ Նազարյանցի բանաստեղծությունները սահուն ու երաժշտական են, բայց զուրկ են անհատական դրոշմից. «պ. Նազարյանց կը պատկանի մեր նորեկ բանաստեղծներու այն խումբին՝ որուն բազմաթիվ ներկայացուցիչները բուսան նախասահմանադրական վերջին քանի մը տարիներու գրական երաժշտության եղանակին: Ապահովաբար՝ տաղանդավորներ չեն պակսիր անոնց մեջ: Եվ սակայն, բացի մեկ կամ երկուքե, բացառաբար ուշադրության արժանի դիմագծություններու ծնունդ չտվավ այդ անարյուն գրագիտության աղքատիկ շրջանը» (1911, N 11, էջ 177): Փայլակի «Անպետ սունկերը» վերլուծականից պարզվում է, որ տաղանդագուրկ բանաստեղծները սնկերի պես աճում են ու բազմանում: Նմաններից մեկի՝ Կ. Մեծարենցի ոտանավորները նա ոչնչություն կամ ոչինչ է համարում: Կ. Մեծարենցի հրատարակած 29 էջից բաղկացած գրքույկը գրվել էր 1907-1910 թթ.: «Երեք տարվան տաժանելի երկունք մը՝ այդ... մուկը ծնելու համար», - այն այսպես է գնահատում Փայլակը (1912, N 33, էջ 145-146): Նա հոգիվածն ավարտում է հետևյալ առաջարկով. «Ժամանակ է որ վերջ տրվի այս վտանգավոր կատակերգության... Այս անպետ սունկերը գրականության թավուտքին գեղեցկությունն ալ կը խանգարեն: Մեղք է, անոնց ա'լ մեղք է, անոնցմե խեր սպասող ցեղին ա'լ: Տարբեր հողի մը վրա անոնցմե ամեն մեկը, փոխանակ անպետ սունկ մը ըլլալու, կրնա շատ օգտակար բույս մը դառնալ ու ցեղին պարտեզը շենցնել»: Այս կենսական խնդրով լավ կլինի, որ զբաղվեն ուսուցիչները կամ Կ. Պոլսի նորակազմ ուսուցչական միությունը: Բանաստեղծ դառնալու մոլուցքով բռնված աշակերտին ուսուցիչը, ելնելով ազգի ու իր խղճի հանդեպ ունեցած պարտականությունից, պիտի կարողանա ասել. «Տղա՛ս, դուն բանաստեղծ չես կրնար ըլլալ, այս գրվածքները արժեք չունին, հետևաբար ուրիշ կողմ դարձուր աչքերդ» (նույն տեղում):

«Շանթը» հիմնադրման օրվանից մշտապես ջանացել է քաջալերել բանաստեղծական շնորհով օժտված սկսնակներին: «Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում գրախոսվում և գրասեր հասարակայնությանն էին ներկայացվում արևմտահայ ու արևելահայ ճանաչված և անվանի գրողների գրքերն ու ստեղծագործությունները: 1911 թ. Կ. Պոլսում հրատարակված՝ Մաննիկ Պերպերյանի «Արձակ երգերը» Մ. Պարսամյանը համարում է ինքնատիպ և մեկ շնչով կարդացվող գիրք: Այնտեղ ամփոփված որոշ արձակ բանաստեղծություններ («Հովանոցս», «Երեկ», «Խոշոր ծառերուն տակ», «Ըսին ինձի», «Երկտող», «Կասկած» և այլն)

քննադատի կարծիքով՝ հոսում են վճիտ աղբյուրի ջրի պես: Դրանք «կանացի հոգեբանական զննողության մը» արդյունք են (1911, N 2, էջ 30): Մ. Պերպերյանը

«նորօրինակ երգ մը կը թրթռացնէ իր կանացի ու համարձակ քնարին վրա: Նուրբ, անշոշափելի, երագային երգ մը, որ ո՛չ Սիպիլի բառերու երաժշտությունը փոխ առած է, ո՛չ Շուշանիկ Կուրդինյանի ըմբոստ հոգին կը հիշեցնէ և ո՛չ ալ Հերանույշ Արշակյանի ռոմանթիքորեն անկեղծ խառնվածքը» (նույն տեղում): Տեղին է մեջբերել մայիսի 4-ին Կ. Պոլսում տեղի ունեցած համերգի առիթով «Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում Զ. Գալեմքյարյանի թղթակցության մեջ արվեստասեր հասարակության դրսևորած վերաբերմունքը բանաստեղծուհի և երգչուհի Մ. Պերպերյանի նկատմամբ. «Հայ ազգին համար շնորհավորելի ու պատվաբեր հայտնություն մըն էր օր. Պերպերյան. արդեն ասկէ առաջ ալ գրական հրապարակի վրա ծանոթ դեմք մըն էր ան իր արձակ բանաստեղծություններով ու պոստիկ սիրային արձակ երգերով: Օր. Պերպերյան իրեն հատուկ անկեղծ ու համարձակ եղանակով մը կը գրեր, թուղթին վրա թրթռացնելով իր սրտին բաբախումները և հոգին ալեկոծող հուզումները (1913, N 41-42, էջ 281):

«Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում հետաքրքիր ու հանգամանալից վերլուծականներ են Տիգրան Զյուլյուրյանի «Վանքը» վիպակի մասին Փայլակի ծավալուն գրախոսականը (1914, N 55, էջ 110-111, N 56, էջ 127-128), Հ. Զորթյանի գրախոսականը Փայլակի «Հայերը Նիկոմիդիո գավառին մեջ» գրքի առիթով (1914, N 58, էջ 157-158), Մկ. Պարսամյանի «Ով որ սուլթան մը ունի իր հոգիին մեջ» անդրադարձը Ռուբեն Զարդարյանի ստեղծագործություններին (1914, N 54, էջ 94) և այլն: Դրանք բոլորը գետեղված են «Գրքեր» խորագրի ներքո: Հիշատակենք դրանցից ևս մեկը՝ նվիրված Մ. Երեմյանի «Պատկերներ (արձակ քնար, 1909-1913)» գրքին: Հեղինակը Մերուժան Պարսամյանն է: Նա նշում է, թե բանասեր «Հ. Ս. Երեմյան բանաստեղծի իսկական ձիրքեր ցույց կուտա այս հատորով... Պատկերները նոր թվական մը կը բանա իր գործին և կ'ստիպէ մեզ անդրադառնալու իր խորհրդապաշտ բանաստեղծի հոգիին» (1914, N 57, էջ 139): Բանախոսը մեջբերել է նաև մի շարք գրողների, ինչպես՝ Ավ. Իսահակյանի, Դ. Վարուժանի դրական կարծիքները Հ. Երեմյանի այս գրքի մասին: Մ. Պարսամյանը «Մամուլ» բաժնում անդրադառնում է Կ. Պոլսի «Ազատամարտի» 1911 թ. N 48-ում Արտ. Հարությունյանի արտահայտած այն տեսակետին, թե հայ ժողովրդի կրած տառապանքի երգիչներ էին արևելահայ պոեզիայում Ավետիս Ահարոնյանը, իսկ արևմտահայերի մեջ՝ Սիամանթոն: «Շանթի» խմբագրի կարծիքով. «Արտաշես Հարությունյան Ազատության ճանապարհին վրա, Հայորդիներու ցավի աղաղակներեն, Հոգեվարքի և Հույսի ջահերուն բոցերանգ լույսեն ու Կարմիր արյունոտ լուրերեն միտքը հոգնած, պահ մը մոռցած է ան մյուս հոյակապ բանաստեղծը, որ կը կոչվի Դանիել Վարուժան» (1911, N 2, էջ 30): Պարսամյանը ամփոփ ձևով վերլուծում է Սիամանթոյի և Վարուժանի քնարերգությունը՝ նշելով, թե «Դանիել Վարուժան, Սիամանթոյին հետ ու Սիամանթոյեն անկախաբար, պետք է նկատել հայուն տառապանքը վսեմորեն եղերերգողներեն մեկը» (նույն տեղում): Իսկ 1912 թ. N 27-ի «Մամուլում» Մերուժան Պարսամյանը գրական բանավեճ է սկսում Ալ. Շիրվանզադեի հետ «Հորիզոնում» տպա-

գրված նրա այն հոդվածի առիթով, որտեղ Շիրվանզադեն «պոռնկագիր» է համարում Դ. Վարուժանին: Պարսամյանը ցավում է, որ նշանավոր թատերագիրը այդպես է

արտահայտվել Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր»-ի առիթով. «Բավական է որ Շիրվանզատե խիղճը ունենար կարդալու անոր Սարսուռները, Ցեղին Սիրտը և պարբերականներու մեջ հրատարակած շարք մը քերթվածները, այն ատեն վստահ ենք որ ան իր մեջ ուժը պիտի չզգար դատավորի վերարկուով մոտենալու Վարուժանի տաղանդին» (1912, N 27, էջ 51): «Շանթի» 1913 թ. «Գրքեր» բաժնում Փայլակը, ներկայացնելով Դ. Վարուժանի նոր հրատարակված «Հեթանոս երգեր» ժողովածուն, նրան այսպես է բնութագրում. «Դ. Վարուժանի նախորդ հատորին՝ Ցեղին Սիրտը, վրա խոսած պահուս, ըսած էի. «Այս երիտասարդ բանաստեղծը այն քերթողներեն է, որոնց ազգային երգիչ մակդիրը կուտար հին սերունդը»: Այսօր կրնամ նույնը կրկնել, ավելցնելով թե այդ ազգային երգիչը ժամանակին ոգիին համապատասխան լարեր ունի իր քնարին վրա» (1913, N 41-42, էջ 279-281): Կյանքն է բաբախում «Հեթանոս երգեր»-ում: Այնտեղ կան սեր, կիրք, խանդ, զայրույթ, հուսահատություն: «Այդ բոլորը կան կյանքին մեջ և բանաստեղծին մատները բոլոր խազերը կը հնչեցնեն», - իր վերլուծականը այսպես է ավարտում Ժակ Սայապալյանը (նույն տեղում):

«Մամուլի» հերթական անդրադարձում Մ. Պարսամյանը չափազանց միակողմանի է համարում Կ. Պոլսի «Ազատամարտում» (1912, N 934) Վ. Մալեգյանի «Կերոններ» գրքին գրաքննադատ Ռ. Դարբինյանի տված գնահատականը: Եթե Դարբինյանը բանաստեղծություններն ուսումնասիրում է իրենց հասարակագիտական արժեքի տեսանկյունից, ապա «Մալեգյանին հետ պետք է թրքահայ բանաստեղծներու մեծամասնությունն ալ պիտակվի նույն հոգիով աղքատ, քաղթենիորեն չոր, դատարկ բառերով» (1912, N 27, էջ 51-52): Իսկ «Գրքերում» Սահակ-Մեսրոպը արձանագրում է. «Տակավին բանաստեղծ Մալեգյանին գիրքը որ և է լուրջ և խղճամիտ ուսումնասիրության առարկա չը դարձավ», թեև գրվել են մի շարք գրախոսականներ: Եթե դրանց մի մասում Մալեգյանը բարձրացվում էր ամպերից վեր, ապա մյուսներում բոլորովին ժխտվում էր նրա «քերթողական կարողությունը» (1913, N 36, էջ 194-195): Այնինչ «Կերոնները» գիրքը Վ. Մալեգյանի կյանքի պատմությունն է: Այստեղ խտացված ձևով իրենց արտահայտությունն են գտել բանաստեղծի սերը, վիշտը, տառապանքը և մյուս ապրումները: «Ինչ որ կը պակսի իրեն՝ սոսկ թռիչքն է ու գունագեղ պատկերացումը... Բայց մենք ասոնց պակասն ալ կարևոր թերություններ չպիտի նկատեինք, որովհետև սիրո ցավը և ունայնության տառապանքը խեղդած, ընկճած ու ճմլած է իր սիրտը, թեև ան ապրելու տենչանքով կը բաբախե դեռ», - գրում է Սահակ-Մեսրոպը: Նա վերլուծությունն ավարտում է այն համոզմունքով, որ Վ. Մալեգյանը կյանքի տառապանքը ներանձնորեն ու տխուր երգող բանաստեղծ է: Չպետք է անտարբերությամբ խորտակել նրան:

«Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում հատուկ ուշադրության են արժանացել Լ. Շանթի ստեղծագործությունները: Քննադատների գնահատականներում մատնանշվում են այս գրողի՝ նկատելի թեմատիկ նորությունները և դրանցում առկա թերությունները: Օրինակ՝ Փայլակը գտնում է, որ Լ. Շանթի «Վերծին» վեպի որոշ փոփոխություններով

վերահրատարակումը թեմատիկ առումով ողջունելի է: Չէ որ վեպում բարձրացվում են հայուհիների՝ հանրային գործունեությամբ զբաղվելու խնդիրը և հասարակական հնչողություն ունեցող նմանաբնույթ մի շարք այլ հարցեր, թեև «պոլսահայ կյանքը շատ խորունկ ճշտությամբ մը չէ ներկայանար «Վերժին»-ին մեջ» (1911, N 1, էջ 13-14): Փայլակը նշում է նաև վեպում եղած քերականական սխալները և մերժելի համարում մեզանում չկիրառվող դարձվածքների օգտագործումը: Այդուհանդերձ, բարձր է գնահատում Լ. Շանթի գրելաոճը. «Հոգեբանական նուրբ ու վճիտ վերլուծականներու մեջ շատ հաջող է Շանթ... Խոշոր բառեր չի գործածեր Շանթ, մեջեն չելլվելիք նախադասություններու լաբիրինդոսին մեջ չի քաշքշեր ընթերցողին միտքը (ինչպես մեր հոգեբան կոչված գրագետներուն շատերը կ'ընեն), այլ իր պարզության մեջ գերազանցապես գրավիչ, դյուրամարսելի նախադասություններով կ'ըսե ըսելիքը» (նույն տեղում): Իսկ «Հին աստվածներ» դրամայի գրախոսականում Փայլակը ծավալուն ու խորը վերլուծություն է կատարում՝ նշելով, թե հեղինակի ոճը հարուստ է բառամթերքով և «արտահայտության սիրուն հղացումներով, սակայն լեզվական ու քերականական այն նորությունները, որոնց կ'են-թարկվի ինքը միայն, չափազանց կը նսեմացնեն ամբողջ կառուցվածքը» (1912, N 28, էջ 66-67): Այս առիթով դիտողություններ են արվել մամուլում «Վերժին» վեպի հրատարակությունից հետո: Լ. Շանթը դրանք հաշվի չի առել: Չնայած սրան՝ «Հին աստվածներ» դրաման «ամբողջությանը մեջ գեղեցիկ է և խորհրդածության առատ նյութ կը մատակարարե» (նույն տեղում): Լ. Շանթի ստեղծագործությունների և հատկապես «Հին աստվածների» քննարկումները տևական են եղել արևմտահայ գրական շրջանակներում: Հնչած կարծիքները փորձել են ամփոփել 1913 թ. մարտի 3-ի գրական ասուլիսում, «գոր կազմակերպած էր Էսայան Սանուց Միությունը» (1913, N 37, էջ 212): Հանձնաժողովի նախագահին էր Դուրյան արքեպիսկոպոսը, անդամներն էին՝ Կոմիտաս վարդապետը, Ռ. Զարդարյանը, Գ. Զոհրապը, Դ. Վարուժանը, Միամանթոն, Մ. Կյուրճյանը, Մ. Շամտանճյանը, Ս. Մինասյանը և Թեոդիկը: Նրանց կարծիքով՝ «Հին աստվածները» հայ թատերգության մեջ «սեմպոլիք առաջին գեղեցիկ փորձն է»: Դրաման «իր էությամբ կը կրե համաշխարհային բնույթ՝ հայկական գույնով և հայկական միջավայրի մեջ պատկերացված: Ոճը ըստ էության քննադատելի չէ, իսկ լեզուն ունի քննադատելի կողմեր: «Հին աստվածները» հայ տաղանդի գեղեցիկ մեկ արտահայտությունն է (նույն տեղում): Եվ ընդհանրապես, «Շանթը» ողջունում է Սանուց միության ջանքերով 1913 թ. անցկացված գրական այն ասուլիսները, որոնք նվիրված էին Լ. Շանթի, Գ. Զոհրապի և Դ. Վարուժանի ստեղծագործությունների քննարկումներին: Հանդեսը այդ միջոցառումների կազմակերպիչներին խորհուրդ է տալիս հեղինակների ընտրության հարցում չլինել կողմնապահ, որովհետև «գրականությունը պետք է ձերբազատել կողմնակցության նեղ ու փցուն հաշիվներեն... և ան պետք է գերծ պահել կուսակցական շունչն» (1913, N 40, էջ 258): Այս սկզբունքին է հետևում նաև «Շանթը» հրատարակության առաջին օրվանից իր էջերում տպագրվելու հրավիրելով «բոլոր հոսանքներու գրագետները որպեսզի միևնույն հանգրվանին դիմեն»:

Գրական անցուդարձի, նոր հրատարակված գրքերի, գրական մամուլի և ընդհանրապես մշակույթի և արվեստի ոլորտների նորությունների մասին լուրեր, թղթակցություններ և թարգմանական նյութեր կան «Շանթի» »Հայ հորիզոններ» բաժնում: Օրինակ՝ 1911 թ. հուլիսի մեկի համարում ներկայացվում են անվանի երգիչ Արմենակ Շահմուրադյանի՝ Փարիզում ունեցած հաջողությունը և ֆրանսիական մամուլի անդրադարձը այդ կապակցությամբ, նաև՝ Թիֆլիսում կայացած՝ Ալեքսանդր Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյա հոբելյանին նվիրված միջոցառման մանրամասերը, Ղազարոս Աղայանի մահվան գույժը և այլն: Մասնավորապես, արժե հիշատակել Արմենակ Շահմուրադյանի մասին ֆրանսիական «Լը կոլուար» թերթից արված մեջբերումը. «Առաջին անգամն էր որ Բարիզի Օբերային պես տիեզերահռչակ երաժշտական բեմի մը վրա, Ֆաուսթի կարևոր դերին մեջ հայ արվեստագետ մը կ'երևար: Շահ-Մուրադյան հուսախաբ չըրավ իր համակիրները... Այս առաջին փորձը իրեն պատվաբեր եղավ» (1911, N 2, էջ 31): «Պարի-ժուռնալն» էլ արձանագրել էր, որ Շահմուրադյանի հաջողությունը կատարյալ եղավ (նույն տեղում): «Հայ հորիզոններ» բաժնում տպագրված լուրերը հաճախ վերածվում էին վերլուծականների ու գրախոսականների: Այսպես, փոքրիկ գրախոսական է Հովհաննես Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակի մասին լուրը: «Երեսուն տարի շարունակ հավատարիմ մնաց բանաստեղծը իր քնարին: Ան ունեցավ մարդկային հոգիին բոլոր լարերու ամեն տեսակ թրթռումները, և այդ ամենը արտահայտեց գեղարվեստորեն: Անոր շատ քերթվածները դարձած են Կովկասի համայն հայության սեփականությունը, կ'երգվին ամեն տեղ, նույնիսկ գավառի խուլ անկյուններու մեջ», - գրում է բաժնի պատասխանատու Շանթարգելը (1913, N 40, էջ 257): Այս բաժնի «Նոր գրքեր» ենթաբաժնում փոքրիկ գրախոսականներից բացի տպագրում էին նաև լուր-գնահատականներ նոր հրատարակված գրքերի մասին: Օրինակ՝ «Շանթը» տեղյակ է պահում, որ շուտով լույս է տեսնելու Վահան Թեքեյանի «Հրաշալի հարություն» բանաստեղծությունների ժողովածուն: Մեկ այլ փոքրիկ լուրից հայտնի է դառնում, որ հրատարակվելու են Իսկուհի Մինասյանի երկու նոր գրքերը: Միաժամանակ փորձ է արվում գնահատել Ի. Մինասյանին իբրև գրող: Ասվում է, որ նա մեր կին «բանաստեղծներուն մեջ ամենեն բանաստեղծական խառնվածքը ունեցողներեն է: Իր արձակ քերթվածները, երաժշտական ներդաշնակությունով օծված են: Բառերու, գեղեցիկ պարբերություններու քանդակագործ մըն է տիկ. Մինասյան» (1914, N 52-53, էջ 80): Ի դեպ, «Նոր գրքերի» նման լուր-գնահատականներ կան նաև «Մամուլ» ենթաբաժնում այն գրքերի հրատարակման մասին, որոնց վերաբերյալ նյութեր կային ժամանակի արևմտահայ և արևելահայ մամուլի հայտնի օրգաներում՝ «Ազատամարտում», «Մշակում», «Դաշինքում» և այլուր: Այդ ենթաբաժնում գնահատականներ կան գրական աշխարհի նորությունների առիթով: Այստեղ անդրադառնում են, օրինակ, «Դաշինքի» N 1401-ում տպագրված այն հոդվածին, որում նշվում է, թե Իզմիրում հիմնվել է գրական միություն՝ «Հայ գրականություն» հանդեսի խմբագիր Զարեհ Գազազյանի ջանքերով: «Շանթը» ողջունում է իզմիրցիներին այդ նախաձեռնության համար՝ քննադատելով Կ. Պոլսի գրողների անմիաբանությունը:

«Հայ հորիզոններ» բաժնի լուրերը հաճախ նպաստում էին դրանցում ներկայացվող տեղեկատվությանը համահունչ միջոցառումների անցկացմանը: Այդ լուրերի շնորհիվ, որոնց համաձայն, 1911 թ. հայաբնակ տարբեր վայրերում մեծ շուքով նշվելու էր Ալ. Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյակը, արևմտահայ գրական շրջանակում նույնպես պատրաստվում էին անդրադառնալ այդ իրադարձությանը: Արդեն տպագրվել և Կ. Պոլսի գրախանութներում վաճառվում էր Ա. Անտոնյանի «Շիրվանզադե» գրքույկը: Տ. Կամսարականի նախաձեռնությամբ հրատարակության էր պատրաստվում գրողի ստեղծագործությունների վերաբերյալ վերլուծական հոդվածներն ամփոփող ժողովածուն, ընթերցողի դատին էր հանձնվելու Գր. Մալխասի «Շիրվանզադե և իր երկը» աշխատությունը (1911, N 2, էջ 31-32): Շուտով «Շանթ» հանդեսի նախաձեռնությամբ սկսում են նշել նաև արևմտահայ գրողների հոբելյանները: Դրանցից առաջինը բանաստեղծ Հովհ. Սեթյանի գրական գործունեության 30-ամյա հոբելյանն էր: «Սեթյան մեր գրական աշխարհին մեջ գուրգուրալի դեմք մը եղած է, իր շուրջը ստեղծելով միշտ հարգանքի անուշ մթնոլորտ մը. իսկ իբրև ուսուցիչ, անիկա զարգացած սերունդ մը ձգած է իր եղին», - գրում է Շանթարզելը (1913, N 41-42, էջ 283):

Գրողների և արվեստագետների հոբելյանների վերաբերյալ լուրերին զուգահեռ «Շանթը» ընթերցողներին տեղեկացնում էր այլ կարևոր միջոցառումների, շնորհանդեսների ու հոբելյանների մասին: Օրինակ՝ 1911 թ. N 3-ում ասվում է, որ առաջիկայում «Հանդես ամսօրյայի» 25-ամյակն է: Մինչ այդ տոնական օրը, հրատարակվելու էր «Հանդես ամսօրյայի» անցած ուղուն նվիրված «Գրական ժողովածուն»: «Հանդես ամսօրյան» ջանացել էր «ցուլացնել Ազգային Միտքը և Եվրոպայի ներկայացնել Հայուն հին ու նոր առաքինությունները, հատկությունները, քննելով, բանասիրելով, քննադատելով զանոնք» (1911, N 3, էջ 45): «Շանթի» կարծիքով, ամեն հայ պետք է սիրի ու գնահատի «Վիեննական Մխիթարյաններու այս սքանչելի Հանդեսը» (նույն տեղում):

Հայ հորիզոններ» բաժնի միջոցով «Շանթն» ընթերցողներին տեղյակ էր պահում հայրենիքում և արտերկրում հայ արվեստագետների ու մտավորականների նվաճումների և հաջողությունների մասին: 1911 թ. հուլիսի 15-ի համարում այդ կարգի երեք լուր կա: Դրանցից մեկում, հղում անելով արաբական «Էլ-վաթան» օրաթերթին, «Շանթը» հայտնում է, որ Կոմիտաս վարդապետը Եգիպտոսում իր համերգային հյուրախաղերի ժամանակ «մեծ ընդունելություն գտած է, որչափ հայ, նույն քան օտար գեղարվեստասերներու կողմե» (1911, N 3, էջ 45): Հայտնում է նաև, որ վերոնշյալ օրաթերթը տպագրել է Կոմիտասի լուսանկարը՝ նրան համարելով «հանճար մը եկեղեցական երաժշտության մեջ» (նույն տեղում): Կ. Պոլսում 1914 թ. փետրվարի 9-ին տեղի ունեցած «Հայ գուսան» երգչախմբի համերգի առիթով «Հայ հորիզոններ» բաժնում Կոմիտասի մասին Շանթարզելը գրում է. «Կոմիտաս վարդապետ անխոնջ արվեստագետ մըն է և եվրոպական լավագույն վարպետներու հետ կրնա մրցիլ իր զմայելի *orchestrographie*-ներով: Միշտ պիտի փափաքեինք լսել զինքը ու իր հոգնաջան երգչախումբը» (1914, N 54, էջ 96): Այդ բաժնի մեկ այլ լուրով ներկայացվում են Հռոմի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, մա-

լաթիացի երիտասարդ, բայց արդեն Եվրոպայի արվեստասեր հասարակայնությանը հայտնի նկարիչ Սարգիս Խաչատուրյանի ձեռքբերումները: Ըստ այդմ, «երիտասարդ հայ նկարիչը ունի բավական պատվաբեր աշխատություններ, որոնք Իտալիայի և Գերմանիայի մեջ ալ մասնագետ-ներու գովեստներուն արժանացած են» (1911, N 4, էջ 63): «Շանթի» լուրերի համաձայն, հաջողությունների է հասել պոլսահայ պարուհի տիկին Արմեն Օհանյանը Լոնդոնի «ծանոթ թատրոններեն մեկուն՝ Հիբոտրոմի մեջ՝ ուր այնքան ծափեր կը խլե անգլիական հասարակութենեն: Լոնտոնի մամուլը կը փառաբանե հայ պարուհին (1911, N 6, էջ 95): Արծաթե մեդալ է ստացել Փարիզի բժշկական համալսարանի դոկտոր Միսքճյանը: Նա մասնակցել է այդ համալսարանի ամենամյա մրցանակաբաշխությանը: 500 ատենախոսությունից նրա՝ «606-ի պատճառած մահերը» վերնագրով ատենախոսությունն էր շահել երկրորդ մրցանակը: «Շանթը» շնորհավորում է հայազգի դոկտորին հաղթանակի կապակցությամբ և նշում, որ անվանի բժիշկը վերադարձել է հայրենիք ու աշխատում է Կ. Պոլսում. «Ուրախ ենք որ տոքթ. Միսքճյանի պես հայության անունը բարձր պահողներ կան նոր սերունդին մեջ: Կը շնորհավորենք զինքը և կը մաղթենք որ ժողովուրդը զիտնա գնահատել իր արժանիքը» (1914, N 52-53, էջ 80):

«Շանթ» հանդեսում երևում է մշակույթի և արվեստի հայ և օտարազգի ներկայացուցիչների ընտրանին: «Շանթի» էջերում տպագրվել են ոչ միայն նրանց ստեղծագործությունները, այլև նրանց մասին հոդվածներ ու վերլուծականներ՝ գրեթե յուրաքանչյուր համարում: Այդ նյութերը գետեղվել են «Հայ նկարիչներ», «Գերմանացի բանաստեղծներ», «Իտալացի բանաստեղծներ», «Անգլիական գրականություն», «Պարսկական բանաստեղծություն», «Հնդկական բանաստեղծություն», «Օտար հորիզոններ», «Ճանչվոր դեմքեր» բաժիններում: Օրինակ՝ «Հայ նկարիչներ» բաժնում տպագրված Հրանտ Նազարյանցի հոդվածը ուշագրավ անդրադարձ է Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործություններին և ոճին: Որոշ ժամանակ անց «Շանթը» տեղեկացնում է Մյունխենի գեղարվեստների միջազգային ցուցահանդեսում Փ. Թերլեմեզյանի հաղթանակի և ստացած արծաթե մեդալի մասին, որը նկարչին շնորհվել էր «Սանահինի եկեղեցու գավիթը», «Հայ գյուղացի քահանան» և «Բոսֆորյան տեսարան» նկարների համար (1913, N 41-42, էջ 284): «Հայ նկարիչներ» բաժնի հետաքրքիր նյութերից է Ա. Պառավյանի ռեպորտաժը բեռլինաբնակ ծովանկարիչ Վարդան Մախոխյանի արվեստանոցից: Ծնունդով տրապիզոնցի Մախոխյանը 20 տարեկանից տեղափոխվել է Եվրոպա, նախ՝ սովորելու, ապա՝ որոշ ժամանակ ապրելով այնտեղ, ի վերջո հաստատվել է Բեռլինում: Նրա նկարների ցուցահանդեսները ջերմ ընդունելության են արժանացել Գերմանիայում, Իտալիայում, Եգիպտոսում և այլուր: Վ. Մախոխյանը Բեռլինում «իբր նկարիչ եզական դիրքի մը տիրացած է և ամբողջ Եվրոպայի մեջ գեղարվեստի հայտնի հեղինակություն մը ճանչված է... Իր նկարները գրեթե ամբողջ Գերմանիո և օտար երկիրներու մեջ բազմաթիվ գեղարվեստական հանդեսներու և պատկերազարդ թերթերու

մեջ արտատպված են քանի-քանի անգամներ», - գրում է Ա. Պառավյանը (1912, N 22, էջ 345-350): Ի դեպ, «Շանթում» թարգմանաբար տպագրել են նաև Լայպցիգի «*Reclam*» հրատարակիչ-գրատան «*Reclams Univer-sum*» շաբաթաթերթում հրատարակված՝ արվեստագետ Ֆիլիպ Պերկեսի «Վարդան Մախոխյան» հոդվածը:

Հրատարակության տարիներին իր բաժիններով ու խորագրերով, իր արձարձած թեմաներով ու խնդիրներով «Շանթը» կարողացել է դառնալ իրապես ժամանակի գրական-գեղարվեստական չափանիշներին համապատասխանող հանդես, որի համարները հրատարակվելուն պես սպառվել են, և որը բավարարել է ընթերցող հասարակայնության գեղագիտական պահանջները:

#### ЖУРНАЛ “ШАНТ” В 1911-1915 ГГ.

ОВСЕПЯН М. В.

##### Резюме

Журнал “Шант” издавался в городе Константинополе в 1911-1915 гг. и в 1918-1919 гг. Являясь ведущим литературно-научным журналом, „Шант“, способствовал развитию армянской литерату-ры. На страницах журнала издавались произведения не только армянских, но и зарубежных писателей, литераторов и искусство-ведов. “Шант” соответствовал литературно-культурным запросам своего времени.

В дальнейшем “Шант” стал литературно-политическим жур-налом.